ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ
ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ծնվել է 1896թ., Ադրբեջանի Ելիզավետպոլ (այժմ՝ Գյանջա) քաղաքում: Ավարտել է տեղի վեցդասյա դպրոցը, ապա էքստեռն քննություններով՝ 2-րդ աստիճանի դպրոցը: Ծառայել է ցարական բանակում:

1918թ. զորացրվել է և մեկնել Բաքու աշխատելու: Այդտեղ էլ ծանոթացել է Ստեփան Շահումյանի հետ, դարձել նրա գաղափարակիցը: Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո գործուղվել է Ելիզավետպոլ, սկզբում որպես կուսակցության գավկոմի կազմիրահանգչական բաժնի վարիչ, քարտուղարի տեղակալ, ապա՝ քաղկոմի քարտուղար (1922):

1923-1926թթ. աշխատել է գավառային խորհրդի գործկոմի նախագահի տեղակալ:

1926թ. տեղափոխվել է Հայաստան: Աշխատել է Երևանի գավգործկոմի նախագահի տեղակալ, ՀԽՍՀ կենտգործկոմի կազմբաժնի վարիչ, Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ:

1935թ. նշանակվել է <<Արարատ>> գործարանի տնօրեն:

1937-1938թթ. Լ. Հովսեփյանը եղել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ, ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալը (1938-1956)՝ միաժամանակ համատեղելով Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի (1945-1947), ՀԽՍՀ անտառային տնտեսության ժողկոմի պաշտոնը (1948-1953):

1956-60թթ. եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալը: Ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Մահացել է 1960 թվականին: